**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության**
**անշարժ գույքի շուկան 2015թ. I եռամսյակում**

*Հոդվածը ներկայացնում է ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացված անշարժ գույքի շուկայի մոնիթորինգի /համակարգված դիտարկումներ/ աշխատանքների արդյունքները և նպատակ ունի քաղաքացիներին իրազեկ դարձնելու ԼՂՀ անշարժ գույքի շուկայի իրավիճակին: Հոդվածում ներկայացվող Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում անշարժ գույքի շուկայական գները ձևավորվել են կոմիտեի ստորաբաժանումների կողմից գրանցված առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող անշարժ գույքի գների վերլուծության արդյունքում:*

2015թ. I եռամսյակում կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրականացվել է 1435 միավոր անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը 2014թ. IV եռամսյակի համեմատ նվազել է 54,5%-ով, իսկ 2014թ. I եռամսյակի համեմատ աճել է 34,6%-ով:

Իրականացված գրանցումների ծավալներն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում անշարժ գույքի նկատմամբ իրականացված իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I եռամսյակ 2014թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2015թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2014թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *740* | *-11,4%* | *656* | *-43,5%* | *1162* |
| Ասկերան | *208* | *-12,0%* | *183* | *-52,8%* | *388* |
| Մարտունի | *325* | *-34,8%* | *212* | *-65,8%* | *620* |
| Մարտակերտ | *217* | *-35,0%* | *141* | *-60,4%* | *356* |
| Հադրութ | *226* | *-65,9%* | *77* | *-72,4%* | *279* |
| Շուշի | *137* | *-53,3%* | *64* | *-50,4%* | *129* |
| Քաշաթաղ | *326* | *-77,3%* | *74* | *-63,7%* | *204* |
| Շահումյան | *15* | *86,7%* | *28* | *75,0%* | *16* |
| **Հանրապետություն** | ***2194*** | ***-34,6%*** | ***1435*** | ***-54,5%*** | ***3154*** |

2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխումներն ըստ գործարքների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| ***Գործարքների տեսակները*** | *I եռամսյակ 2014թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2015թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2014թ* |
|---|---|---|---|---|---|
| **ԱՌՈՒՎԱՃԱՌՔ** | *343* | *-20,1%* | *274* | *-24,1%* | *361* |
| **ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ** | *183* | *-26,2%* | *135* | *-22,0%* | *173* |
| **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** | *418* | *-42,6%* | *240* | *-25,0%* | *320* |
| **ԳՐԱՎԱԴՐՈՒՄ** | *265* | *-56,6%* | *115* | *-90,4%* | *1202* |
| **ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ** | *152* | *-26,3%* | *112* | *-26,8%* | *153* |
| **ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ** | *62* | *-71,0%* | *18* | *260,0%* | *5* |
| **ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ** | *24* | *-50,0%* | *12* | *-62,5%* | *32* |
| **ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ** | *5* | *-80,0%* | *1* | *-50,0%* | *2* |
| **ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ** | *431* | *-67,7%* | *139* | *-65,9%* | *408* |
| **ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ** | *10* | *120,0%* | *12* | *-57,1%* | *28* |
| **ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ** | *33* | *-9,1%* | *30* | *-70,0%* | *100* |
| **ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄ** | *159* | *41,5%* | *225* | *-10,4%* | *251* |
| **ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄ** | *109* | *11,9%* | *122* | *2,5%* | *119* |
| **Ընդամենը** | ***2194*** | ***-34,6%*** | ***1435*** | ***-54,5%*** | ***3154*** |

2015թ. I եռամսյակում հանրապետությունում ընդհանուր առմամբ իրականացվել է 274 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 24,1%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 20,1%-ով: Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 51, իսկ բնակելի տների նկատմամբ՝ 37 առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում:

2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության շրջաններում առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակների փոփոխություններն ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I եռամսյակ 2014թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2015թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2014թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *142* | *-4,9%* | *135* | *-20,6%* | *170* |
| Ասկերան | *32* | *34,4%* | *43* | *-8,5%* | *47* |
| Մարտունի | *20* | *15,0%* | *23* | *-17,9%* | *28* |
| Մարտակերտ | *64* | *-82,8%* | *11* | *-71,8%* | *39* |
| Հադրութ | *9* | *44,4%* | *13* | *-7,1%* | *14* |
| Շուշի | *59* | *-54,2%* | *27* | *-6,9%* | *29* |
| Քաշաթաղ | *16* | *-68,8%* | *5* | *-82,8%* | *29* |
| Շահումյան | *1* | *17,0 անգամ* | *17* | *3,4 անգամ* | *5* |
| **Հանրապետություն** | ***343*** | ***-20,1%*** | ***274*** | ***-24,1%*** | ***361*** |

2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում անշարժ գույքի առուվաճառքի գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը և նրանց փոփոխումներն՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| ***N*** | ***Անշարժ գույքի տեսակները*** | ***Առուվաճառքի գործարքների քանակը*** | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ***I եռամսյակ 2014թ.*** | ***փոփոխումը*** | ***I եռամսյակ 2015թ.*** | ***փոփոխումը*** | ***IV եռամսյակ 2014թ.*** |
| **1** | ***բազմաբնակարան շենքի բնակարան*** | *63* | *-19,0%* | *51* | *-23,9%* | *67* |
| **2** | **առանձնատուն** | *47* | *-21,3%* | *37* | *-46,4%* | *69* |
| **3** | **արտադրական նշ. օբյեկտ** | *6* | *-16,7%* | *5* | *25,0%* | *4* |
| **4** | **հասարակական նշ. օբյեկտ** | *22* | *-68,2%* | *7* | *-53,3%* | *15* |
| **5** | **ավտոտնակ** | *23* | *39,1%* | *32* | *-13,5%* | *37* |
| **6** | **հողամաս** | *182* | *-22,0%* | *142* | *-16,0%* | *169* |
| | ***Ընդամենը*** | ***343*** | ***-20,1%*** | ***274*** | ***-24,1%*** | ***361*** |

2015թ I և 2014թ IV եռամսյակներում հանրապետության մի շարք քաղաքային համայնքներում վաճառված բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքների գործարքների պայմանագրային գների, մեր կողմից կատարված հարցումների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջին գները և նրանց փոփոխման սահմանները.

## Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գները

| *Քաղաքներ* | *2014թ. IV եռամսյակ* 1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ | | | *2015թ. I եռամսյակ* 1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ | | | *փոփոխումը 2014թ. IV եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջին* | |
| Ստեփանակերտ (առաջնային շուկա) | 295 500 | 422 000 | **358 750** | 338 000 | 393 000 | **365 500** | *1,9%* |
| Ստեփանակերտ (երկրորդնային շուկա) | 171 000 | 294 000 | **232 500** | 171 000 | 294 500 | **232 750** | *0,1%* |
| Ստեփանակերտ (միջինացված շուկա) | 226 000 | 356 000 | **291 000** | 226 250 | 356 250 | **291 250** | *0,1%* |
| Ասկերան | 46 550 | 68 250 | **57 400** | 47 000 | 71 000 | **59 000** | *2,8%* |
| Մարտունի | 42 000 | 61 000 | **51 500** | 42 500 | 63 000 | **52 750** | *2,4%* |
| Մարտակերտ | 18 000 | 34 200 | **26 100** | 18 250 | 35 250 | **26 750** | *2,5%* |
| Հադրութ | 23 000 | 35 000 | **29 000** | 23 500 | 36 000 | **29 750** | *2,6%* |
| Շուշի | 59 500 | 105 000 | **82 250** | 60 000 | 110 000 | **85 000** | *3,3%* |

## *Բնակելի տներ*

| *Քաղաքներ* | *2014թ. IV եռամսյակ* միջինը 200 քմ շինությամբ և միջինը 600քմ փնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/ | | | *2015թ. I եռամսյակ* միջինը 200 քմ շինությամբ և միջինը 600քմ փնամերձով բնակելի տան արժեքը /ՀՀ դրամ/ | | | *փոփոխումը 2014թ. IV եռամսյակի նկատմամբ* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *նվազագույն* | *առավելագույն* | *միջինը* | *նվազագույն* | *առավելագույն* | *միջինը* | |
| Ստեփանակերտ | 25 250 000 | 39 650 000 | **32 450 000** | 25 250 000 | 39 700 000 | **32 475 000** | *0,1%* |
| Ասկերան | 4 150 000 | 5 250 000 | **4 700 000** | 4 150 000 | 5 350 000 | **4 750 000** | *1,1%* |
| Մարտունի | 3 350 000 | 4 650 000 | **4 000 000** | 3 350 000 | 4 750 000 | **4 050 000** | *1,2%* |
| Մարտակերտ | 1 500 000 | 3 100 000 | **2 300 000** | 1 500 000 | 3 150 000 | **2 325 000** | *1,1%* |
| Հադրութ | 1 400 000 | 2 840 000 | **2 120 000** | 1 450 000 | 2 850 000 | **2 150 000** | *1,4%* |
| Շուշի | 2 900 000 | 6 750 000 | **4 825 000** | 2 950 000 | 6 850 000 | **4 900 000** | *1,5%* |

2015թ. I եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 240 վարձակալության գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 25,0%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 42,6%-ով:Վարձակալության գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I եռամսյակ 2014թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2015թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2014թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *39* | *-61,5%* | *15* | *-6,3%* | *16* |
| Ասկերան | *35* | *51,4%* | *53* | *-11,7%* | *60* |
| Մարտունի | *100* | *-15,0%* | *85* | *26,9%* | *67* |
| Մարտակերտ | *33* | *-48,5%* | *17* | *-5,6%* | *18* |
| Հադրութ | *65* | *-67,7%* | *21* | *-40,0%* | *35* |
| Շուշի | *7* | *-85,7%* | *1* | *-50,0%* | *2* |
| Քաշաթաղ | *132* | *-65,9%* | *45* | *-60,9%* | *115* |
| Շահումյան | *7* | *-57,1%* | *3* | *-57,1%* | *7* |
| **Հանրապետություն** | ***418*** | ***-42,6%*** | ***240*** | ***-25,0%*** | ***320*** |

2015թ. I եռամսյակում հանրապետությունում գրանցվել է 1738.83 հա ընդհանուր մակերեսով, գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության 195 գործարք: Հողամասերի մակերեսները և գործարքների քանակը՝ ըստ հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | ***2014թ. I եռամսյակում վարձակալված հողամասերի*** | |
|---|---|---|
| | **քանակը** | **մակերեսը /հա/** |
| Ասկերան | *46* | *361.55* |
| Մարտունի | *70* | *210.60* |
| Մարտակերտ | *16* | *239.75* |
| Հադրութ | *18* | *335.56* |
| Շուշի | *0* | *0* |
| Շահումյան | *2* | *67,22* |
| Քաշաթաղ | *43* | *524.10* |
| **Հանրապետություն** | ***195*** | ***1738,83*** |

Հանրապետությունում անշարժ գույքի շուկայի դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետության քաղաքներում վարձակալության համար, որպես ակտիվ անշարժ գույքի տեսակներ, հանդես են գալիս Ստեփանակերտում հասարակական նշանակության օբյեկտները, իսկ շրջաններում գյուղատնտեսական նշանակության հողամասերը:

2015թ. I եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 115 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 90,4%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 56,6%-ով:
2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում հանրապետության շրջաններում անշարժ գույքի գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը և նրանց փոփոխությունները՝ ըստ անշարժ գույքի առանձին տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *Անշարժ գույքի տեսակները* | *Գրավադրված անշարժ գույքի քանակը* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | *I եռամսյակ 2014թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2015թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2014թ.* |
| *1* | ***բազմաբնակարն շենքի բնակարան*** | *93* | *-67,7%* | *30* | *-82,5%* | *171* |
| *2* | **առանձնատուն** | *80* | *-55,0%* | *36* | *-64,0%* | *100* |
| *3* | **արտադրական նշ. օբյեկտ** | *17* | *23,5%* | *21* | *-76,1%* | *88* |
| *4* | **հասարակական նշ. օբյեկտ** | *33* | *-18,2%* | *27* | *-55,7%* | *61* |
| *5* | **ավտոտնակ** | *5* | *-80,0%* | *1* | *-50,0%* | *2* |
| *6* | **հողամաս** | *37* | *-100,0%* | *0* | *-100,0%* | *780* |
| | ***Ընդամենը*** | ***265*** | ***-56,6%*** | ***115*** | ***-90,4%*** | ***1202*** |

2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում գրավադրման գործարքների քանակների փոփոխությունները՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I եռամսյակ 2014թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2015թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2014թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *150* | *-50,0%* | *75* | *-68,8%* | *240* |
| Ասկերան | *25* | *-20,0%* | *20* | *-85,1%* | *134* |
| Մարտունի | *43* | *-72,1%* | *12* | *-97,1%* | *418* |
| Մարտակերտ | *17* | *-76,5%* | *4* | *-97,8%* | *186* |
| Հադրութ | *11* | *-90,9%* | *1* | *-99,5%* | *194* |
| Շուշի | *12* | *12-ով պակաս* | *0* | *21-ով պակաս* | *21* |
| Քաշաթաղ | *6* | *6-ով պակաս* | *0* | *9-ով պակաս* | *9* |
| Շահումյան | *1* | *3,0 անգամ* | *3* | *3-ով ավել* | *0* |
| **Հանրապետություն** | ***265*** | ***-56,6%*** | ***115*** | ***-90,4%*** | ***1202*** |

2015թ. I եռամսյակում հանրապետությունում իրականացվել է 13 սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցում, որոնց քանակը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 61,8%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 55,2%-ով:

Սեփականաշնորհման և մասնավորեցման գործարքների քանակների փոփոխություններն՝ ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների 2015թ.I եռամսյակում և 2014թ I և IV եռամսյակներում, ունեն հետևյալ բաշխվածությունը.

| | *I եռամսյակ 2014թ.* | *փոփոխումը* | *I եռամսյակ 2015թ.* | *փոփոխումը* | *IV եռամսյակ 2014թ.* |
|---|---|---|---|---|---|
| Ստեփանակերտ | *19* | *-73,7%* | *5* | *-68,8%* | *16* |
| Ասկերան | *3* | *133,3%* | *7* | *-22,2%* | *9* |
| Մարտունի | *2* | *2-ով պակաս* | *0* | *1-ով պակաս* | *1* |
| Մարտակերտ | *5* | *5-ով պակաս* | *0* | *8-ով պակաս* | *8* |
| Հադրութ | *0* | *1-ով ավել* | *1* | *1-ով ավել* | *0* |
| Շուշի | *0* | *0,0%* | *0* | *0,0%* | *0* |
| Քաշաթաղ | *0* | *0,0%* | *0* | *0,0%* | *0* |
| Շահումյան | *0* | *0,0%* | *0* | *0,0%* | *0* |
| **Հանրապետություն** | ***29*** | ***-55,2%*** | ***13*** | ***-61,8%*** | ***34*** |

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Գնահատման և համակարգված դիտարկումների բաժին »
ՀԵՌ : 95-17- 49